ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-20/11

ք. Երևան «15» հունիսի 2020 թ.

ՀՀ դատախազությունն, ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Նավասարդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նիսսան Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ենգիբարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն** գինը կազմում է 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Նիսսան Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյան 1, փակուղի 1
«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 205282213771
ՀՎՀՀ 00208963

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«15» հունիսի 2020 թ. կնքված
N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-20/11 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50111130/6	Մարդատար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման SU-1, SU-2 ծառայություններ: *տեխնիկական բնութագիրը ըստ չափաբաժինների տեսկցված **տեխ. բնութագիր** Excel ֆայլում:	դրամ	500000	1	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2020թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Նիսսան Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյան 1, փակուղի 1
«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 205282213771
ՀՎՀՀ 00208963

/ստորագրություն/
Կ.Տ

Տեխնիկական բնութագիր - գնացուցակ

ՀՀ դրամ

Հ/h	ավտոմեքենաների պահպանման ծառայություններ, այդ թվում	Չ/մ	NISSAN X-TRAIL
1	Համակարգչային ախտորոշում	հատ	4000
2	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	հատ	5000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
3	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	հատ	3000
4	Օդի զտիչի փոխարինում	հատ	2000
5	Օդորակիչի զտիչի փոխարինում	հատ	3000
6	Բենզամղիչի հանում և տեղադրում	հատ	15000
7	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	հատ	15000
8	Ակսելերատորի հանում և տեղադրում	հատ	5000
9	Ակսելերատորի մաքրում	հատ	6000
	3. Սառեցման և արտածման համակարգ		
10	Փոկի հանում և տեղադրում	հատ	5000
11	Հովհարի հանում և տեղադրում	հատ	8000
12	Ռադիատորի հանում և տեղադրում	հատ	10000
13	Ռադիատորի վերանորոգում	հատ	30000
14	Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում	հատ	60000
15	Թերմոստատի փոխարինում	հատ	10000
16	Ընդարձակող բաքի փոխարինում	հատ	5000
17	Խլարարի հանում և տեղադրում	հատ	5000
18	Հովացման համակարգի փողրակի հանում և տեղադրում	հատ	5000
19	Հովացման հեղուկի փոխարինում	հատ	5000
20	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	հատ	15000

21	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	հատ	5000
	4. Կախոց		
22	Տրավերսի հանում և տեղադրում	հատ	30000
23	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	հատ	10000
24	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	հատ	10000
25	Անվակունդի հանում և տեղադրում	հատ	9000
26	Անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	1025
27	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	հատ	10000
28	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	հատ	5050
29	Զսպանակի հանում և տեղադրում	հատ	2500
30	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	5050
31	Ցնցամեղմիչի լիցքավորում	հատ	3500
32	Ներքևի լծակի հանում և տեղադրում	հատ	5050
33	Ներքևի լծակի վռանների փոխարինում	հատ	1025
34	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	հատ	5050
35	Գնդե հոդակապերի փոխարինում	հատ	5000
36	Ծայրակաների հանում և տեղադրում	հատ	3000
37	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	լրակազմ	10000
38	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	լրակազմ	4050
39	Հետևի զսպանակի փոխարինում	հատ	5000
40	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	5000
41	Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) հանում և տեղադրում	հատ	2525
42	Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) վռանի փոխարինում	հատ	500
43	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	հատ	2025
44	Անվաբացքի կարագավորում	հատ	10100
	5. Ղեկային մեխանիզմ		
45	Ղեկային կալունի հանում և տեղադրում	հատ	15000
46	Ղեկային կալունի վերանորոգում	հատ	60000
47	Ղեկային ձողի հանում և տեղադրում	հատ	3500
48	Ղեկային ձողի նորոգում	հատ	6250

49	Ղեկային ժապավենի փոխարինում	հատ	6000
	5. Արգելակային համակարգ		
50	Գլխ. գլանի հանում և տեղադրում	հատ	5000
51	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	հատ	7500
52	Արգելակային համակարգի օդահանում	հատ	3000
53	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	հատ	4000
54	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	հատ	4000
55	Առջևի սուպպորտի վերանորոգում	հատ	5000
56	Հետևի սուպպորտի վերանորոգում	հատ	5000
57	Արգելակային փողրակի փոխարինում	հատ	2500
58	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	հատ	3250
59	Հետևի արգելակային կոճղակների փոխարինում	հատ	3250
60	Առջևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում	հատ	5000
61	Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում	հատ	5000
62	Արգելակային սկավառակի հղկում	հատ	6000
63	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	հատ	5000
64	Ձեռքի արգելակի կարգավորում	հատ	1250
	7. Էլեկտրասարքավորում		
65	Էլեկտրասարքավորման վերանորոգում	ժամ	8000
66	Լապտերի լամպի փոխարինում	հատ	1500
67	Էլեկտրական տվիչների փոխարինում	հատ	3000
68	Էլեկտրական անջատիչների փոխարինում	հատ	2000
69	Լապտերների կարգավորում	հատ	3000
70	Վառոցքի կոճի փոխարինում	հատ	2500
71	Վառոցքի մոմերի փոխարինում	հատ	10000
72	Կոնդիցիոների լիցքավորում	հատ	15000
	8. Այլ ծառայություններ		
73	Անիվի հանում և տեղադրում	հատ	500
74	Անվադողի քանդում և հավաքում	հատ	1025
75	Անիվի հավասարակշռում	հատ	1025

76	CO-զոդման աշխատանքներ	սմ	1025
77	Խառատային աշխատանքներ	կտոր	5000
78	Փականագործի աշխատանքներ	ժամ	8000
	Պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		
	1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
1.1	Յուղ շարժիչի կիսասինթետիկ	լիտր	4000
2.1	Յուղ շարժիչի սինթետիկ	լիտր	5000
3.1	Յուղի զտիչ	հատ	4250
4.1	Յուղի փողրակ	հատ	15000
5.1	Վառոցքի մոմ	հատ	11000
6.1	Վառելանյութի մղիչ էլեկտրական	հատ	150000
7.1	Վառելանյութի փողրակ	հատ	18000
8.1	Օդի զտիչ	հատ	11000
9.1	Օդորակիչի զտիչ	հատ	12000
10.1	Ջերմաստիճանային տվիչ	հատ	26000
11.1	Յուղի տվիչ	հատ	27000
12.1	Բաշխիչ լիսեռի տվիչ	հատ	26000
13.1	Ծնկաձև լիսեռի տվիչ	հատ	33000
14.1	Մաքրող հեղուկ ABRO	հատ	2025
15.1	Օդի ծախսի տվիչ	հատ	75000
	2. Սառեցման և արտածման համակարգ		
16.1	Հովհար	հատ	50000
17.1	Ռադիատոր	հատ	180000
18.1	Ընդարձակող բաք	հատ	45000
19.1	Ընդարձակող բաքի փական	հատ	6500
20.1	Հովացման համակարգի փողրակ	հատ	12500
21.1	Թերմոստատ	հատ	15000
22.1	Սառեցման հեղուկ	լիտր	3500
23.1	Հոլովակ	հատ	30000
24.1	Փոկ	հատ	15000
25.1	Խլարարի ներդիր	հատ	8000

26.1	Խլարարի կախոց	հատ	10000
27.1	Կրոնշտեյն	հատ	12000
28.1	Անուր (Խամուտ)	հատ	500
29.1	Խլարար	հատ	120000
30.1	Վառարանի ռադիատոր	հատ	75000
31.1	Վառարանի շարժիչ	հատ	90000
32.1	ԱՓՏ-ի զտիչ	հատ	7000
33.1	Տրանսմիսսիոն յուղ	լիտր	10000
34.1	ԱՓՏ յուղ	լիտր	10000
35.1	Հերմետիկ	հատ	2025
	3. Կախոց		
36.1	Բարձիկ	հատ	85000
37.1	Տրավերս	հատ	500001
38.1	Ձախ կամ աջ հոդակապ	հատ	150000
39.1	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	հատ	20000
40.1	Անվակունդ	հատ	110000
41.1	Անվակունդի խցուկ	հատ	10000
42.1	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	հատ	10000
43.1	Հարվածամեղմիչի թասակ	հատ	22000
44.1	Ձսպանակ	հատ	50000
45.1	Առջևի ցնցամեղմիչ	հատ	105000
46.1	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	հատ	15000
47.1	Ցնցամեղմիչի վռան	հատ	6000
48.1	Ներքևի լծակ	հատ	125000
49.1	Ներքևի լծակի վռան	հատ	7500
50.1	Գնդե հոդակապ	հատ	8000
51.1	Առջևի կայունարարի վռան	հատ	5000
52.1	Հետևի կայունարարի վռան	հատ	5000
53.1	Կայունարարի կանգնակ	հատ	12500
54.1	Հետևի ցնցամեղմիչ	հատ	50000
55.1	Աջ կամ ձախ ձգան	հատ	23000

56.1	Ծայրակալ	հատ	35000
57.1	Քսայուղ լիտոլ	գրամ	1000
58.1	Քսայուղ Շռուս	գրամ	1200
	4. Ղեկային մեխանիզմ		
59.1	Ղեկային կալուն	հատ	350000
60.1	Ղեկային կալունի խաչուկ	հատ	32500
61.1	Հիդրոուժեղարարի փողրակ	հատ	120000
62.1	Ղեկային ժապավեն	հատ	50000
	5. Արգելակային համակարգ		
63.1	Գլխ. գլան	հատ	75000
64.1	Վակուումային ուժեղարար	հատ	270000
65.1	Արգելակային փողրակ	հատ	17500
66.1	Սուպպորտի ուղղորդիչ	հատ	10000
67.1	Սուպպորտի մանժետ	հատ	20000
68.1	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	40000
69.1	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	35000
70.1	Առջևի արգելակային սկավառակ կամ թմբուկ	հատ	75000
71.1	Հետևի արգելակային սկավառակ կամ թմբուկ	հատ	80000
72.1	Ձեռքի արգելակի ճոպան	հատ	40000
73.1	ABS-ի տվիչ	հատ	42500
74.1	Արգելակային հեղուկ՝ DOT-3	գրամ	2000
	6. Էլեկտրասարքավորում		
75.1	Լամպ	հատ	10000
76.1	Վառոցքի կոճ	հատ	35000
77.1	Ապակելվացիչ	հատ	15000
78.1	Ապակելվացիչի պոմպ	հատ	15000
79.1	Ապակելվացիչի հեղուկի տարա	հատ	12500
80.1	Ապակեմաքրիչի շարժիչ	հատ	150000
	ԸՆԴԱՄԵՆԸ		4557026

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ դատախազություն

ԿԱՏԱՐՈՂ
«Նիսսան Սերվիս» ՍՊԸ

ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

ք. Երևան, Տիգրանյան 1, փակուղի 1
«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 205282213771
ՀՎՀՀ 00208963

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«15» հունիսի 2020 թ. կնքված
N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-20/11 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

			Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝այդ թվում**				
			I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը
1	50111130/6	**NISSAN X-TRAIL** ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում	-	250000.0	500000.0	500000.0	500000.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Նիսսան Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյան 1, փակուղի 1
«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 205282213771
ՀՎՀՀ 00208963

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«15» հունիսի 2020 թ. կնքված
N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-20/11 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«15» հունիսի 2020 թ. կնքված
N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-20/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն